

անոր մահւան մասին , կորո՞ւստ մը : որ անշուշտ ծանր պիտի ըլլար  
գիտութեան համար :

Անտարակոյս շուտով ծօք . Շառքօք բերնէն լսելու բաղդը պիտի ու-  
նենանք իր վասնդալից եւ յուզիչ արշաւանքի պատմութիւնը եւ ար-  
դիւնքները . որոնց իր ժամանակին ուրախութեամբ պիտի հաղորդենաց  
սթանաէրէի ընթերցողներուն :

Հ. Ա.

ՀՅԱՅԱՑՄԱՆ

ՍՆԵԴԱՎԱՅՐԻՒՄ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Կ ապոյտ ալիքներ . վշշող ալիքներ .  
Երազ-իղձերու փրփուր-ժաղիկներ .  
Ո՞հ , ես ձեր աեսքին կորօտ մնացի՝  
Եռերուս մէջ ձեզ զուր որոնեցի ...

Դուք շշնչալով իմ վառ ցնորքին .  
Ծիշեցնէիք անցեալ մը անդին .  
Մինչ վասփորի վեհ , չքնազ ափունքին .  
Կը ձայնակցէի ձեր մեղմ օրրերդին :

Երբ թաւշեալ ալիքդ՝ մնացա փրփուրով  
Մեզմէի պարէիք միմեանց փարելով .  
Ու սոցերուս տակ փրփուր-ժանեակներ .  
Փութով սփորէիք զերթ քնքուշ նաւէր :

Օհ . ձեզ կորուսի . հեռացաք յաւէտ .  
Այժմ իմ առջես անզութ նմնզամէտ .  
Մութ ովկիտանն է կանգնած յաղթական .  
Անցեալ յուշերու զերթ հսկայ պատան ...  
Օր . Զ . ԱԼԵԱՆԱՔ

Բարիզ .

